ՀՏԴ 159.9

Հոգեբանություն

Վիգեն ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՀՀ ԶՈՒ փոխգնդապետ
ՀՊՄՀ հայցորդ
E-mail: arpikiust@mail.ru

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Հոդվածում անդրադարձ է կատարվում զինծառայողների հոգեբանական պատրաստության, պատրաստվածության և պատրաստականության խնդիրներին, ինչպես նաև հոգեբանական պատրաստության ամբողջական գործընթացը երեք ժամանակափուլում (մինչ զինվորական ծառայության անցնելը, զինվորական ծառայության ընթացքում և զինվորական ծառայությունից արձակվելուց հետո) դիտարկելու մասին:

Կատարված աշխատանքների արդյունքում վեր հանված տվյալները և հոգեբանական պատրաստության գործընթացի եռափուլ մոդելի առաջարկվող կառուցվածքը նախորոշում են հետագա մասնագիտական ուսումնասիրությունների ու հետազոտությունների նոր ուղղություններ:

Բանալի բառեր՝ զինծառայող, ծառայողական պարտականություններ, ռազմական հոգեբանություն, հոգեբանական պատրաստություն, պատրաստվածության վիճակ, պատրաստականություն, մասնագիտական պատրաստություն, մարտունակ հոգեվիճակ, վերաբերմունք, դաստիարակություն, տրամադրվածություն:

В. Манукян

ПСИХОЛОГИЧЕСКАЯ ПОДГОТОВКА ВОЕННОСЛУЖАЩИХ КАК ЭФФЕКТИВНОЕ ПРЕДУСЛОВИЕ ВЫПОЛНЕНИЯ СЛУЖЕБНЫХ ОБЯЗАННОСТЕЙ

В статье говорится о психологической подготовке, подготовленности и готовности военнослужащих, а также орассмотрении нами всего процесса психологической подготовки

в три периода(до прохождения военной службы, во время военной службы и после увольнения с военной службы).
Данные, выявленные в результате выполненных работ, и предложенная структура трехэтапной модели процесса психологической подготовки предопределяют новые направления дальнейших профессиональных изучений и исследований.
Ключевые слова: военнослужащий, служебные обязанности, военная психология, психологическая подготовка, состояние готовности, готовность, профессиональная подготовка, боеспособное душевное состояние, отношение, воспитание, настрой.

V. Manukyan

PSYCHOLOGICAL TRAINING OF SERVICEMEN AS AN EFFECTIVE PRECONDITION FOR THE PERFORMANCE OF OFFICIAL DUTIES

The article discusses the psychological training, preparedness and readiness of military servicemen, as well as our consideration of the entire process of psychological training in three periods (before military service, during military service and after dismissal from military service).
The data revealed as a result of the work performed and the proposed structure of a three-stage model of the process of psychological preparation predetermine new directions for further professional studies and research.
Key words: military serviceman, official duties, military psychology, psychological training, state of readiness, willingness, professional training, combat-ready state of mind, attitude, upbringing, readiness.

Նորույթ չէ, որ դեռևս անտիկ ժամանակներից տեսակի և/կամ սեփական անվտանգությունը, ինչպես նաև որոշ դեպքերում պատմության մեջ իրենց ուրույն տեղը գտած ծավալապաշտական հայացքներ ունեցող զինվորական առաջնորդները (թագավորներ, զորահրամանատարներ, սպարապետներ և այլն) իրենց ռազմարշավների հաջող ընթացքն ապահովելու համար որպես առաջնային նախապայման համարել են ենթակա զորքի (զինակյաց գյուղացու) մարզվածությունն ու ոգեղենությունը՝ մարտնչելու կարողությունը, տրամադրությունն ու հաղթանակելու ոգին:

Ռազմարվեստի մեզ հասանելի պատմության ամբողջ ընթացքում մարտնչող սերունդները մշտապես զբաղվել են ռազմական գործիքներ (մարտնչելու միջոցներ, զենքեր) հնարելու, ձեռքբերելու, կատարելագործելու, ինչպես նաև այդ միջոցներն արդյունավետ կիրառելու փորձի ձեռքբերմամբ:[1]

Ինչպես զինվորական մշակույթի բազմադարյան էվոլյուցիայի ամողջ ընթացքում, այնպես էլ տեխնոլոգիական զարգացման արդի ժամանակներում պետությունների զինված ուժերի պատրաստությունը տվյալ ռազմաքաղաքական ղեկավարության համար շարունակվում է համարվել առաջնային:

Ռազմարվեստի դասական կանոնների վերաձևակերպումների ու փոխակերպումների շարունակական՝ ժամանակներին համահունչ ընթացքն ու ներկայիս գիտատեխնոլոգիական զարգացումները պարզապես հրամայականն են զինված ուժերում զինծառայողների պատրաստության նոր ճկուն մեխանիզմներ մշակելու (զարգացնելու) համար: Ինչպես այլ ոլորտներում, այնպես էլ զինվորական գործունեության մեջ մասնագիտական պատրաստության և պատրաստվածության բարձր աստիճանը համարվում է գերխնդիր, որի առանցքում, անշուշտ, իր հիմնաքարային տեղն է զբաղեցնում **հոգեբանական պատրաստության** գործոնը:

Հետազոտության նպատակը՝ ուսումնասիրել հոգեբանական պատրաստության էությունը, գործընթացի տևողությամբ պայմանավորված՝ արդյունավետությունը և հետագա հետազոտությունների նոր ուղղությունների նախորոշումը:

Խնդիրները՝

1) ուսումնասիրել զինծառայողների հոգեբանական պատրաստության նպատակը,

2) ուսումնասիրել զինծառայողների հոգեբանական պատրաստության արդյունավետությունը՝ զինվորական ծառայության հանդեպ ՀՀ զինակյաց քաղաքացու մեջ ձևավորված վերաբերմունքի համատեքստում,

3) ուսումնասիրել հոգեբանական պատրաստության գործընթացիարդյունավետությանը նպաստող համակարգային տարրերը,

4) նախանշելհետազոտություններիևորուղղություններ:

Հետազոտություններն անցկացվել են 204 նորակոչիկ զինծառայողների, 61 զինվորական ծառայությունից ԶՈՒ պահեստազոր արձակված շարքային կազմի նախկին պայմանագրայինների և 47 նախազորակոչային տարիքի ՀՀ քաղաքացիների շրջանում:

Հետազոտություններնիրականացվել են զինվորական ծառայությունը կանոնակարգող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ուսումնասիրման, ինչպես նաև մշակված հեղինակային հարցաշարերի ու նախապես ձևակերպված բանավոր հարցադրումների միջոցով:

Զինծառայողների մասնագիտական պատրաստության բարձր աստիճանը ապահովվում է չորս հիմնական ուղղություններով՝

- ռազմամասնագիտական,
- բարոյահրավական,
- ֆիզիկական,
- ***հոգեբանական:***[2]

Հոգեբանական պատրաստության *նպատակն*է ձևավորել (մշակել) զինծառայողների հոգեբանական կայունությունը և գործառութային հուսալի հոգեբանական որակները, որոնք, համադրվելով ռազմամասնագիտական, բարո-

յահրավական և ֆիզիկական որակների հետ, կապահովեն ցանկացած իրավիճակում ծառայողամարտական ու մարտական խնդիրների արդյունավետ կատարում, ինչպես նաև սեփական հոգեկան վիճակի և գործողությունների ղեկավարում: [2]

Զինված ուժերում հոգեբանական պատրաստությունը զինծառայողների հոգեբանական պատրաստականության, կայունության ձևավորմանը և ամրապնդմանը միտված նպատակային ազդեցությունների համակարգ է:[3]

Թեմայի վերաբերյալ ուսումնասիրություններ են իրականացրել ոլորտի մի շարք գիտնականներ:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, խորհրդային բանակի գնդապետ Մ.Ի. Դյաչենկոն **հոգեբանական պատրաստվածությունը** դիտարկում է որպես մարդու (զինծառայողի) դիրքորոշումներում, տրամադրվածության և մասնագիտական կարևոր որակների մեջ, ինչպես նաև ծառայողական գործունեության ժամանակ հոգեկանի ֆունկցիայի արդյունավետության դրսևորում: [4]

Բանակում՝ զինված ուժերում (պետական զինակյաց բոլոր կառույցներում), «**հոգեբանական պատրաստություն»** եզրույթը մշտապես դիտարկվել և/կամ ընկալվել է իբրև բացառապես զինվորական և/կամ տվյալ ոլորտի գործառույթ, որն սկսվում է զինծառայողի զինվորական ծառայության անցնելուն պես (զորակոչ, պայմանագրի կնքում) և ավարտվում ՀՀ ԶՈՒ պահեստազոր արձակվելով:

Ըստ ուսումնասիրությունների՝ տարբեր համակազմերի զինծառայողների ծառայության տևողությունը ժամանակային առումով տարբեր է, օրինակ՝ շարքային պայմանագրային կազմի զինծառայողը օրենքով սահմանված կարգով իրավունք ունի զինվորական ծառայությունից ՀՀ ԶՈՒ պահեստազոր արձակվել իրեն հարմար ցանկացած ժամանակ, սակայն ժամկետային պարտադիր զինծառայողը օրենքով սահմանված կարգով պարտավոր է ծառայել երկու տարի, իսկ սպաների ծառայության ժամկետների համար իրավական այլ կարգավորումներ են մշակված:

Հոգեբանական պատրաստության համատեքստում կարևոր հանգամանք են նաև նշված համակազմերի զինծառայողների գործառութային պարտականությունների ծավալի ու բովանդակության, տարիքային և կրթական ցենզի տարբերությունները:

Ուսումնասիրության շրջանակներում՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչված 204 նորակոչիկների շրջանում, կատարված հարցումների արդյունքներով, 34%-ը հնարավորության դեպքում չէր ցանկանա ծառայել զինված ուժերում՝ որպես պատճառ նշելով անպատրաստ լինելու հանգամանքը:

Շարքային կազմի 61 նախկին պայմանագրային զինծառայողների հիմնական մասի՝ 67%-ի ԶՈՒ պահեստազոր արձակվելու պատճառները պայմանավորված են ֆինանսական ծանր խնդիրներով:

Մեր հարցադրումներին՝ նախազորակոչային տարիքի ՀՀ քաղաքացիների 47 կողմից տրված պատասխանների վերլուծությամբ՝ զինվորական ծառայության և զինված ուժերի պատմական առաքելության վերաբերյալ ոչ բոլորի մոտ են ձևավորված ճշգրիտ ընկալումներ:

ՈՒսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ նշված համակազմերի զինծառայողների և նախազորակոչային տարիքի ՀՀ քաղաքացիների մոտ զինվորական ծառայության և ծառայողական (գործառութային) պարտականությունների կատարման համատեքստում առաջնային շարժառիթներն ու դիրքորոշումները տարբեր են:

Նկատառելով այն հանգամանքը, որ զինծառայողների հոգեբանական պատրաստությունը՝ որպես գործընթաց, միտված է վերջիններիս մոտ պատրաստվածության և պատրաստականության անհրաժեշտ վիճակների ձևավորմանն ու ամրապնդմանը՝ ուսումնասիրությունները փաստում են, որ պատրաստության գործընթացի արդյունավետությունը փոքրանում է, երբ սահմանափակվում ենք լոկ զինվորական ծառայության տվյալ (համապատասխան) ժամանակափուլով:

Զինծառայողների հոգեբանական պատրաստության հիմնախնդիրը մեր կողմից դիտարկվում է որպես մարդու կյանքի ամբողջ ընթացքում տեղի ունեցող շարունակական գործընթաց, որը պայմանականորեն բաժանում ենք երեք ժամանակափուլի.

1. *Մինչ զինվորական ծառայության անցնելը*

Մինչ զորակոչը (զինվորական ծառայության անցնելը) զինվորական ծառայության նկատմամբ անհրաժեշտ դիրքորոշումների ձևավորումը հիմնականում պայմանավորվում է անձի սոցիալ-հոգեբանական զարգացման ամբողջ ընթացքում ձևավորված նրա վերաբերմունքով, դաստիարակությամբ, տրամադրվածությամբ (դրական, բացասական) և գաղափարական համոզմունքներով:

Անձի մոտ նշված հատկանիշները հիմնականում ձևավորվում և զարգանում են մինչ զինվորական ծառայության անցնելը, ինչով էլ կարող է պայմանավորվել զինծառայողների ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետությունը:

2. *Զինվորական ծառայության ընթացքում*

Բանակում զինծառայողների հոգեբանական պատրաստությունը պետք է դիտարկել նրանց կյանքի տվյալ (հերթական) փուլում՝ զինվորական ծառայության ընթացքում իրագործվող նպատակային գործունեություն (պատրաստվածության և պատրաստականության վիճակի ձևավորում ու ամրապնդում), որը, անշուշտ, նրա կյանքի ընթացքում զինվորական գործի նկատմամբ համապատասխան դիրքորոշումներ ձևավորելու և ընդհանուր պատրաստության գործընթացի ամենաարդյունավետ շրջանն է համարվում:

Զինծառայողների հոգեբանական պատրաստվածությունը դիտարկում ենք որպես տվյալ ժամանակափուլում պատրաստության գործընթացի ցանկալի վերջնարդյունք:

Հոգեբանական պատրաստվածության վիճակն սպասվելիք ծառայողամարտական գործունեության դժվարությունների արդյունավետ հաղթահարման նպատակով զինծառայողների հոգեկանի կենտրոնացման ու ակտիվացման գործընթաց է, որը կապահովի կատարման անհրաժեշտ արդյունավետություն և որակ (իրադրային հոգեբանական պատրաստվածություն): [2]

3. Զինվորական ծառայությունից արձակվելուց հետո

Ժամկետային և/կամ պայմանագրային զինվորական ծառայության ավարտով չեն վերջանում ՀՀ քաղաքացու պարտականությունները երկրի անվտանգության ապահովման գործում:

Ավարտելով զինվորական ծառայությունը օրենքով սահմանված կարգով՝ ՀՀ քաղաքացին զինվորական հաշվառման է վերցվում զինված ուժերի պահեստազորում, որի նպատակն է ապահովել խաղաղ ժամանակ պահեստազորային պատրաստության շրջանակներում քաղաքացիների ռազմական ունակությունների կատարելագործման և վերապատրաստման գործընթացի, իսկ պատերազմի ժամանակ՝ զորահավաքային զորակոչի պատշաճ իրականացումը:[5]

Համաձայն ՀՀ պաշտպանության մասին օրենքի 3-րդ գլխի 14-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների՝ երկրում զորահավաք հայտարարվելու դեպքում զինված ուժերի պահեստազորում հաշվառված ՀՀ քաղաքացիները պարտավոր են մասնակցել պաշտպանական բնույթի աշխատանքների կատարմանը:[6]

Եզրակացություն

Անձին զինվորական ծառայությանը նախապատրաստելու, նրա ծառայողական պարտականությունների արդյունավետ կատարումն ապահովելու, խաղաղ, պատերազմական, ինչպես նաև արտակարգ իրադրությունների հնարավոր ամենատարբեր զարգացումների ժամանակ զինծառայողների կողմից առաջադրված խնդրի պատշաճ կատարումն ապահովելու նպատակով՝ նրանց կյանքի ընթացքում անհրաժեշտ է ապահովել հոգեբանական պատրաստության անընդհատությունը, պատրաստվածության և պատրաստականության կատարելագործումը, վարքի և/կամ վարքային գործընթացների, կենսընթացների համապատասխան համակարգերի (մոդելների) նպատակային ազդեցությամբ փոխակերպումների ապահովումը:

Յուրաքանչյուր սերնդի պատերազմի ավարտին ի հայտ են գալիս գալիք սերնդի հիմնական հատկանիշներն ու միջոցները:[1]

Գրականություն

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հովհաննիսյան Ա.**, Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. հեռանկարները, Երևան 2017թ.:
2. **Ռուդսկոյ Ի.Ի.**, Ընդհանուր և զինվորական հոգեբանություն, Մոսկվա, 2004թ.:
3. ՀՀ ԶՈՒ ԳԻՊ և ՀՊՊ ուսումնամեթոդական ծրագիր-ձեռնարկ, Երևան, 2020թ.:
4. **Դյաչենկո Մ. Ի.**, «Ժամանակակից պատերազմի պայմաններում խորհրդային ռազմիկների հոգեբանական պատրաստումը մարտական գործողություններին», Մոսկվա՝ 1966թ.:
5. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք:
6. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը: